20 ՏԱՐԻ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Կրթություն բոլորին. Ամենուր. Ցկյանս

Բովանդակություն

1 Նախաբանի փոխարեն
էջ5

2 Հիշարժան թվեր և փաստեր
էջ10

3 Ծրագրեր
էջ14

4 Շահառուներ
էջ36

5 Ռեսուրսներ
էջ38

6 Իրագործողներ
էջ40

7 Հավելվածներ
էջ42

Մեծահասակների կրթությունը ֆորմալ, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսումնառության գործընթացների ամբողջությունն է, որի միջոցով այն անձը, ում իրեն շրջապատող հասարակությունը համարում է մեծահասակ, զարգացնում և հարստացնում է ապրելու և աշխատելու իր կարողությունները՝ ելնելով թե՛ սեփական, թե՛ իր համայնքի, կազմակերպության և հասարակության շահերից:.

ՅՈՒՆԵՍԿՕ [1] Միավորված ազգերի կրթական, գիտական և մշակութային կազմակերպություն

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ (Գերմանիայի ժողովրդական բարձրագույն դպրոցների միության միջազգային համագործակցության ինստիտուտ) կազմակերպությունը հիմնվել է 1969 թ. Գերմանիայում: Այն ցանցային միջազգային հասարակական կազմակերպություն է, որը գործում է ավելի քան 30 երկրում՝ նպաստելով ողջ կյանքի ընթացքում կրթության իրավունքի և հնարավորությունների իրացմանը:

Հայաստանում կազմակերպության մասնաճյուղը բացվել է 2002 թ.-ին: 20 տարվա գործունեության ընթացքում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը աշխատել է ՀՀ-ում Լրացուցիչ և շարունակական կրթության (ԼՇԿ) և Մեծահասակների ուսումնառության ու կրթության (ՄՈՒԿ) ջատագովության և զարգացման ուղղությամբ:

1. Նախաբանի փոխարեն

Էսթեր Հակոբյան
Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի
հայաստանյան գրասենյակի տնօրեն

Սիրելի ընթերցող,
Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի
սիրելի բարեկամ,

Ինձ համար մեծ պատիվ է ներկայացնել Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի 20-ամյա գործունեության մասին պատմող այս գրքույկը: Ցկյանս ուսումնառության, մեծահասակների կրթության և այլ ոլորտներին աջակցության քսանամյա գործընկերության պատմությունը ներկայացնելու համար մենք օգտագործել ենք թվեր, վկայություններ, հաջողության պատմություններ, նկարներ: Մեր պատմությունը պարզ է և հեշտ ընթեռնելի, բայց մեր ներկայացրած աշխատանքը բազմաբնույթ և բազմակողմանի է: Այն պահանջում է միջամտություններ քաղաքականության մակարդակում (մակրո), մասնագիտական և ինստիտուցիոնալ կարողությունների հզորացման մակարդակում (մեզո), շահառուների հետ անմիջական աշխատանքի մակարդակում (միկրո): Այս բոլոր մակարդակներում ձեռքբերումներ ու արդյունքներ ապահովելու համար անհրաժեշտ է եղել մի շարք կազմակերպությունների և մարդկանց անխոնջ աշխատանքը, նվիրվածությունը և իրենց առաքելության հանդեպ անսասան հավատը: Այս գրքույկը նաև նրանց ջանքերն արժևորելու մասին է, և ես ուրախ եմ նաև յուրաքանչյուր աջակցի ներդրումը ներկայացնելու այս հնարավորության համար, ներառյալ՝

- **Մեր դոնորները՝** Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարությունը, Գերմանիայի Արտաքին գործերի նախարարությունը, Եվրոպական միությունը, որոնց աջակցությունը հնարավոր է դարձնում մեր առաքելության իրագործումն ու աշխատանքը:

- **Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ գերմանական հասարակական կազմակերպությունը,** որը Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության աջակցությամբ վերջին 50 տարիների ընթացքում աշխատել է մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունը խթանելու ուղղությամբ աշխարհի ավելի քան 30 երկրներում, այդ թվում՝ Հայաստանում: Մեզ համար Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը մի քանի կարևոր բան է մարմնավորում. կազմակերպություն, որի առաքելությունը մեծահասակների ուսումնառությունը և կրթությունն է, կառույց, որն ուղղորդում և աջակցում է, գործընկերներ, որոնք տրա-

մադրում են ոչ միայն իրենց փորձն ու մասնագիտական խորհրդատվությունը, այլև բարի կամքն ու անձնական աջակցությունը, որի համար մենք շնորհակալ ենք:

ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը (ՀՀ ԿԳՄՍՆ)՝ կառավարության մեր գործընկերը, որը միացավ ՄՈՒԿ[2] հանրահռչակման և Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի 20-ամյակի արշավին՝ մեկ անգամ ևս առաջին պլան բերելու մեծահասակների կրթությունը: Վերջին մի քանի տարիների ընթացքում ԿԳՄՍ նախարարությունը աշխատել է Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի հետ՝ քաղաքականության և ռազմավարության մեջ մեծահասակների ուսումնառության և կրթության առաջնահերթ խնդիրներն արտացոլելու համար: Մենք հույս ունենք շարունակել մեր համագործակցությունը՝ ի նպաստ մեծահասակների ուսումնառությանը և կրթությանը:

Մեծահասակների կրթության կենտրոնները, որոնց աջակցում է Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը. այս չորս կենտրոնների և մեր մի քանի այլ գործընկեր ՔՀԿ[3]-ների միջոցով է, որ մեր աշխատանքն իմաստալից է դառնում: Ծնորհակալություն մեծահասակների կրթության կարիք ունեցող մարդկանց օգնության ձեռք մեկնելու, նրանց ոգեշնչելու և նրանց համար աշխատելու համար: Այն, ինչ դուք անում եք, շատ կարևոր է:

Մեծահասակների ուսումնառության և կրթության փորձագետները և մասնագետները, որոնք իրենց փորձով ու փորձառությամբ աջակցում են մեր նախաձեռնություններին և գործունեությանը: Ձեզ հետ է, որ մենք կատարում ենք հետազոտություններ, մշակում և անցկացնում ենք դասընթացներ, գրում ենք հոդվածներ և գրքեր, տրամադրում ենք մենթորություն և խորհրդատվություն: Ծնորհակալություն:

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի անձնակազմը, այս հիանալի թիմի յուրաքանչյուր անդամը (20 տարվա ընթացքում շուրջ 20 մարդ), որոնք առաջ են տանում մեր գործը և ապահովում մեր արդյունքներն ու ձեռքբերումները: Դուք լավագույնն եք:

Եվ վերջապես, մեր շահառուները, այն 60,000 մարդիկ, որոնք հավատացել են մեր գործին և ընտրել են մեզ հետ միասին բարելավել իրենց հմտություններն ու հնարավորությունները, իրենց կյանքն ու համայնքները: Դուք մեր մոտիվացիայի աղբյուրն եք:

20-ամյակը տոնելու և խորհելու առիթ է: 2022 թվականին մենք այդ երկուսն էլ անելու մի շարք հնարավորություններ ունեցանք: Գարնանը մեկնարկեց Մեծահասակների ուսումնառության և կրթության հանրահռչակման արշավը, որը կարճ անիմացիոն հոբելյանական տեսաֆիլմի, մեր գործընկերների շնորհավորական տեսաուղերձների, Մեծահասակների կրթության կենտրոնների միջոցառումների և այլ նախաձեռնությունների միջոցով մեր աշխատանքը հետահայաց դիտարկելու ինքնատիպ հնարավորություններ ստեղծեց: Այս գրքույկն ինքնին մի տարեգրություն է, որը փաստում է Հայաստանում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի 20-ամյա ճանապարհի մասին, որը հնարավոր է եղել գործընկերների, աշխատակիցների և շահառուների հետ միասին:

2 | ՄՈՒԿ - Մեծահասակների ուսումնառություն և կրթություն

3| ՔՀԿ - Քաղաքացիական հասարակության կազմակերպություն

Ուվե Գարտենշլեգեր

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի
փոխտնօրեն

**Հայաստանի սիրելի
գործընկերներ,**

Այս տարի մենք տոնում ենք Հայաստանում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի ներկայության 20 տարին: Դժվար է պատկերացնել, որ այսքան երկար ժամանակ է անցել այն պահից, երբ մենք սկսեցինք աշխատել Հայաստանում: Երբ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը որոշեց Հայաստան գալ, հիմնական պատճառը անցումային շրջանն էր: Մենք կարծում էինք, որ մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը կարող է կարևոր դեր խաղալ այդ գործընթացում՝ բերելով այնպիսի նոր գիտելիքներ և հմտություններ, որոնց կարիքը մարդիկ ունեին Խորհրդային Միության փլուզումից հետո: Մեր նպատակն էր ձևավորել այնպիսի կարողունակություններ, որոնք անհրաժեշտ էին աշխատաշուկայում մրցունակ լինելու, նոր, բարդ ու փոփոխվող իրականության մեջ իրենց ուղին գտնելու և իրենց ընտանիքների հետ, իրենց համայնքներում երջանիկ կյանք վարելու համար: Այն ժամանակ մենք տպավորված էինք Հայաստանում մարդկանց ինտելեկտուալ ներուժով՝ չնայած երկրի առջև ծառացած մարտահրավերներին: Իհարկե, երկիրն այժմ այլ է, այն շատ ավելի զարգացած է, և դուք կարող եք հպարտանալ Հայաստանում մեծահասակների կրթության 20 տարվա հաջողություններով: Այնուամենայնիվ, մենք համոզված ենք, որ դեռ միասին ճանապարհ ունենք անցնելու, և Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը կշարունակի իր աջակցությունը մեր հայաստանյան գործընկերներին՝ երկրում ցկյանս ուսումնառության և մեծահասակների կրթության առաջխաղացման համար:

Բոլորիդ շնորհավորում եմ այս տպավորիչ հանգրվանի կապակցությամբ և ողջունում եմ ձեզ որպես մեծահասակների ուսումնառության և կրթության եվրոպական և համաշխարհային համայնքի անդամ:

Նշանավորելով Հայաստանում գործունեության 20 տարին

2022 թ. մայիսին Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը, ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ համագործակցությամբ, մեկնարկեց Մեծահասակների ուսումնառության և կրթության հանրայնացման արշավ: Արշավը նվիրված է Հայաստանում կազմակերպության գործունեության 20-ամյակին՝ ի նպաստ ցկյանս ուսումնառության և մեծահասակների կրթության:

Արշավի խորագիրն է «ԿրթաԲԱՑ. Կրթություն բոլորին, ամենուր, ցկյանս»: Արշավի երեք հիմնական ուղերձներն են.

- ոչ ֆորմալ կրթությունը հեռանկարներ **բացող** հնարավորություն է բոլորի համար,
- ոչ ֆորմալ կրթությունը մարդու ներքին ռեսուրսները **բացահայտող** գործընթաց է,
- ցկյանս ուսումնառությունը իրավունք է բոլորի համար՝ անկախ տարիքից և սոցիալական կարգավիճակից:

Արշավի շրջանակում ներառված են բազմաթիվ միջոցառումներ և մրցույթներ, լրատվամիջոցների կողմից արշավի լուսաբանում, ֆեյսբուքյան իրազեկում, շահառուների հաջողության պատմությունների հանրայնացում և շատ այլ նախաձեռնություններ: Այս գրքույկը արշավի կարևորագույն մասն է, քանի որ այն 20-ամյա պատմության հնարավորինս ամբողջական փաստագրումն է:

vhs
DVV International
ԿՐԹԱՀԱՅ Կրթություն Բոլորին Ամենուր Ցկյանս
ԿՐԹԱ
#Կրթաբաց
#Միշտուսանիմ
#սովորումեմմիշտևամենուր
#DVVArmenia
#AdultEducation
#Հարատև_կրթություն
#Lifelong_learning
#Ցկյանս_ուսումնառություն

DVV Interna
ARTIST'S MAY
WATERCOLOR
MISTERY

2. Հիշարժան թվեր և փաստեր

ավելի քան
150
գործընկեր
կառույց

ավելի քան
5 մլն
եվրո
ներդրում

շուրջ
50
ռեսուրս

2002 –

ՀԱՆՈՒՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅԱՆ

շուրջ
100
աշխատակից փորձագետ խորհրդատու

շուրջ
40
իրականացված
ծրագիր

ավելի քան
60.000
շահառու

2022
ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՉԱՐԳԱՑՄԱՆ

Ավելի քան 5 մլն եվրո ներդրում

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալն իր հայաստանյան գործունեության համար հիմնական ֆինանսական աջակցությունը ստանում է Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության կողմից:

Federal Ministry for Economic Cooperation and Development

Բացի այդ՝ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը պարբերաբար ստանում է լրացուցիչ ֆինանսավորում՝ մասնակցելով Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության և Եվրոպական միության դրամաշնորհային ծրագրերին:

Federal Foreign Office

Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարություն
3,439,420
63.79%

Եվրոպական միություն
1,048,276
19.44%

Գերմանիայի արտաքին գործերի նախարարություն
904,480
16.77%

3. Ավելի քան 40 ծրագիր ի նպաստ մեծահասակների ուսումնառության ու կրթության զարգացմանը

2002 թ.-ից ի վեր Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի **հիմնական** գործունեությունը ծավալվել է մի քանի առանցքային ուղղություններով՝ նպատակ ունենալով խթանել մեծահասակների ուսումնառությունն ու կրթությունը Հայաստանում: Իրականացվել են ծրագրեր և նախաձեռնություններ հետևյալ ուղղություններով՝

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ Հայաստանը պարբերաբար ստացել է նաև լրացուցիչ ֆինանսավորում՝ ընդլայնելով իր գործունեության շրջանակը՝ շեշտադրումը պահելով մեծահասակների կրթության վրա:

1 Ոլորտային քաղաքականության իրականացում

2 Ինստիտուցիոնալ և մասնագիտական կարողությունների զարգացում

3 ՄԿ կենտրոնների միջոցով շահառուների համար նոր հնարավորությունների ստեղծում

4 Համայնքային զարգացում և քաղաքացիական մասնակցություն

Ոլորտային քաղաքականություն

Հայաստանում մեծահասակների ուսումնառության և կրթության քաղաքականության բարելավմանը աջակցելը Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի առաջնահերթություններից է: Աջակցությունն իրականացվում է տարբեր ձևաչափերով.

- Աջակցություն մեծահասակների կրթությունը և ցկյանս ուսումնառությունը համապատասխան օրենքներում, ռազմավարություններում, կառավարության ծրագրերում որպես կրթության առանձին ենթաոլորտ ներառելուն և կիրարկմանը:

- ՄՈՒԿ պրակտիկայի և քաղաքականության վերաբերյալ տարբեր հետազոտությունների և ուսումնասիրությունների իրականացում:

- Քաղաքականություն մշակողների և իրականացնողների, քաղաքացիական հասարակության մասնակցության ապահովում մեծահասակների կրթության միջազգային հարթակներում (ԿՈՆՖԻՆՏԵԱ[4], ՄԿԵԱ[5] համաժողովներ և այլն) և ուսուցողական այցեր դեպի ՄՈՒԿ զարգացած համակարգ ունեցող երկրներ:

- Միջազգային փորձագետների խորհրդատվության ապահովում և այլն:

Մեծահասակների ուսումնառության և կրթության քաղաքականության խթանման համար Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը սերտորեն համագործակցում է ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության հետ: Այս համագործակցության արդյունքում ՀՀ կառավարության 2021-2026 թթ. գործունեության միջոցառումների ծրագրում ներառվել է 6 դրույթ մեծահասակների ուսումնառության և կրթության խթանման ուղղությամբ:

4 | Մեծահասակների կրթության միջազգային համաժողով

5 | Մեծահասակների կրթության եվրոպական ասոցիացիա

Ժաննա Անդրեասյան,
ՀՀ ԿԳՄՍՆ փոխնախարար
ԿՈՆՖԻՆՏԵԱ VII, Մարաքեշ,
Մարոկկոյի Թագավորություն,
հունիս 2022

25 | ՀՀ-ում ոչ ֆորմալ կրթության զարգացում և տարածում. ոչ ֆորմալ կրթության արդյունքների ճանաչում

25.1 Ոչ ֆորմալ կրթության, (ներառյալ՝ երիտասարդների և մեծահասակների ուսումնառության և կրթության) հայեցակարգի և դրա ներդրման ճանապարհային քարտեզի մշակում

25.2 ՀՀ կրթությանն առնչող հիմնական օրենքներում ու ենթաօրենսդրական ակտերում երիտասարդության և մեծահասակների ուսումնառության ու կրթության ոլորտին առնչվող տերմինաբանության (ԼԾԿ, ՄՈՒԿ, ցկյանս և այլն) համապատասխանեցում միջազգայնորեն ընդունված, համաձայնեցված սահմանումներին և ստանդարտներին (օր. ՅՈՒՆԵՍԿՕ, ՄԱԿ[6]). վերլուծություն և առաջարկներ

6 | Միավորված ազգերի կազմակերպություն

25.3 Ոչ ֆորմալ կրթության կազմակերպման համապատասխան մեթոդաբանությունների մշակում և ոլորտի դերակատարների, ծառայություն մատուցողների և աշխատողների կարողությունների զարգացում

25.4 Ոչ ֆորմալ կրթության դերակատարների, ծառայություններ տրամադրողների հաշվեգրման, նրանց կողմից իրականացվող ծրագրերի երաշխավորման և հավաստագրման համակարգերի, կրեդիտների շնորհման և արդյունքների ճանաչման, որակի ապահովման մեխանիզմների մշակում ու փորձարկում (պիլոտավորում)

25.5 Ոչ ֆորմալ կրթության վիճակագրական քանակական և որակական տվյալների հավաքագրման իրավական հենքի և ինստիտուցիոնալ մեխանիզմների (ներառյալ՝ գործիքակազմի) մշակում և ներդրում

25.6 Ոչ ֆորմալ կրթության (ներառյալ՝ երիտասարդների և մեծահասակների ուսումնառության և կրթության) իրազեկվածության բարձրացում հասարակության շրջանում ոլորտի ջատագովության, հանրային արշավների իրականացման միջոցով:

ՀՀ Կառավարության 2021-2026 թվականների գործունեության միջոցառումների ծրագիր

Կարողությունների զարգացում ինստիտուցիոնալ և մասնագիտական մակարդակում

Մեծահասակների ուսումնառության և կրթության ոլորտի մասնագետների և կառույցների կարողությունների զարգացման ծրագրերը մի քանի հիմնական ուղղություններով են ընթացել.

1 | Ուսուցանողների / դասընթացավարների ուսուցանում (ToT[7])՝

շեշտադրելով մեծահասակ ուսումնառուների հետ աշխատանքի առանձնահատկությունները

2 | ՄԿ[8] կենտրոնների ոչ ֆորմալ ցանցի ստեղծում՝

փորձի փոխանակման, միասնական ջատագովության, ռեսուրսների համադրման նպատակով

7 | Training of Trainers

8 | ՄԿ – Մեծահասակների կրթություն

9 | ՀԿ – Հասարակական կազմակերպություն

3 | Ուսումնական այցեր

ՄՈՒԿ զարգացած համակարգ ունեցող երկրներ փորձի փոխանակման նպատակով

4 | Ծրագրային առաջարկներ մշակելու, ծրագրերի կառավարման, ֆոնդահայթայթման **կարողությունների բարելավում** ՄԿ կենտրոնների և այլ գործընկեր ՔՀԿ-ների համար

5 | **Մենթորություն և խորհրդատվություն** ՄԿ կենտրոններին /ՀԿ[9]-ներին և դրանց աշխատակիցներին, աշխատանքների / դասընթացների մշտադիտարկում և հետադարձ կապ

6 | **Գործընկերություններ** հանրային և մասնավոր այլ մասնագիտացած կառույցների և ՄԿ կենտրոնների միջև՝ ծրագրերի բազմազանեցման և որակի չափանիշների բարելավման նպատակով

Ստորև ներկայացված օրինակները կօգնեն ավելի լավ պատկերացում կազմել մեր աշխատանքի մասին:

Փորձի փոխանակում և ուսուցողական այցեր արտերկիր

Այս 20 տարիների ընթացքում շուրջ 160 փորձագետ, դասընթացավար, պետական պաշտոնյա և այլ մասնագետներ ներգրավվել են ուսուցողական այցերում դեպի աշխարհի շուրջ 30 երկիր: Նրանց հնարավորություն է տրվել մասնակցելու գիտաժողովների, քննարկումների և վերապատրաստման ծրագրերի, ծանոթանալու տարբեր երկրների մեծահասակների ուսումնառության և կրթության փորձին և այլն:

Երկրները

1. Ավստրիա
2. Բելառուս
3. Բելգիա
4. Բոսնիա և Հերցեգովինա
5. Բրազիլիա
6. Գերմանիա
7. Դանիա
8. Էստոնիա
9. Թուրքիա
10. Իռլանդիա
11. Իսպանիա
12. Լիտվա
13. Կիպրոս
14. Հորդանան
15. Հունգարիա

16. Ղրղզստան
17. Մարոկկո
18. Մեծ Բրիտանիայի Միացյալ թագավորություն
19. Մոլդովա
20. Շվեյցարիա
21. Շվեդիա
22. Ուկրաինա
23. Ուրուգվայ
24. Պորտուգալիա
25. Ռումինիա
26. Ռուսաստան
27. Սլովենիա
28. Վրաստան
29. Ֆինլանդիա
30. Ֆրանսիա

Ուսուցանողների/ դասընթացավարների ուսուցանում

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը իր գործունեության 20 տարիների ընթացքում պարբերաբար մշակել և իրականացրել է վերապատրաստման դասընթացներ մեծահասակների կրթության ոլորտի ուսուցանողների համար: Դասընթացների մոտեցումները, ոլորտներն ու թիրախային խմբերը բազմազան են եղել. մարզային գյուղատնտեսական քոլեջների հետ աշխատանք, թանգարանային կրթության ոլորտի աշխատակիցների վերապատրաստում, գործընկեր կառույցների աշխատակիցների վերապատրաստում (Իջևանի մեծահասակների կրթության կենտրոնի, «Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» ՀԿ անդամների համար իրականացված դասընթացներ և այլն): Այսպես, 2016թ.-ին Ուսուցման ազգային հիմնադրամի հետ համագործակցությամբ Տավուշի և Կոտայքի մարզերի ՄԿՈՒ[10] ոլորտի շուրջ 150 մասնագետներ վերապատրաստվել են՝ զարգացնելով լրացուցիչ և շարունակական կրթության ծրագրերի կազմակերպման կարողությունները: Բացի դասընթացների իրականացումից՝ մշակվել և հրատարակվել են նաև մի շարք մեթոդական ձեռնարկներ և մոդուլներ:

10 | ՄԿՈՒ – Մասնագիտական կրթություն և ուսուցում

2018 թ.-ից սկսած ուսուցանողների ուսուցանման մոտեցումը փոխվել է՝ մեծապես հիմնվելով Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի մշակած կարևոր գործիքներից մեկի՝ **Curriculum globALE**-ի վրա:

2018-2019թթ. Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի նախաձեռնությամբ միջազգային փորձագետների կողմից մշակվել և իրականացվել է Curriculum globALE -ի վրա հիմնված մեկշաբաթյա դասընթաց ուսուցանողների համար: Գնահատելով ծրագրի արդյունավետությունը և որակյալ բովանդակությունը՝ 2020թ.-ին դասընթացը լրամշակվել է. այն թարգմանվել է հայերեն, թվայնացվել և հասանելի դարձել ավելի մեծ թիրախային խմբի՝ որպես 12-շաբաթյա հիբրիդային դասընթաց: «Մեծահասակների ուսումնառության և կրթության հիմունքներ. դասավանդման մեթոդաբանություն» դասընթացը համատեղում է ինքնուսուցման, առցանց և լսարանային հանդիպումների ձևաչափերը՝ մասնակիցներին հնարավորություն տալով ուսումնասիրել մեծահասակների կրթության միջազգային մոտեցումները, դասավանդման առանձնահատկությունները, ոչ ֆորմալ կրթության



Curriculum globALE (CG)-ն մեծահասակների հետ աշխատող դասընթացավարների մասնագիտական զարգացման միջազգային չափորոշիչ է: Այն մշակվել է Գերմանիայի Մեծահասակների կրթության ինստիտուտի, Լայբնիցի անընդմեջ կրթության կենտրոնի և Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի համատեղ ջանքերով: ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ցկյանս ուսումնառության ինստիտուտի (UIL) հետ համագործակցությամբ այս չափորոշչի առաջին տարբերակը թարմացվել է 2021թ. մայիսի 26-ին և դրվել կիրառության մեջ որպես ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից պաշտոնապես երաշխավորվող ռեսուրս և գործիք:

մեթոդները, խմբային դինամիկայի առանձնահատկությունները, գնահատումն ու հետադարձ կապը և այլն: Այս ձևաչափով այն առաջին անգամ իրականացվեց 2021 թ.-ին՝ առցանց և դեմառդեմ համակցված եղանակով՝ 14 փորձառու դասընթացավարների համար: 2022թ. դասընթացը նախատեսված էր բուհերում դասավանդող երիտասարդ դասախոսների համար, ովքեր հետաքրքրված են ուսուցման նոր մեթոդներով ու մոտեցումներով: Այն ամբողջովին իրականացվել է հայաստանյան դասընթացավարների կողմից՝ միջազգային փորձագետների աջակցությամբ:

2022 թ.-ից ի վեր Հայաստանում հասանելի է նաև Curriculum globALE-ի «Թվային ուսուցումը մեծահասակների կրթության մեջ» մոդուլը, որն ընդհանուր դասընթացի լրացուցիչ մոդուլներից մեկն է: Որպես պիլոտային մոդուլ՝ այն առաջարկվել է 2018, 2019 և 2021թթ-ի դասընթացի մասնակիցներին:

այսպիսով

2018թ.-ից ի վեր

ծրագրի տարբեր ձևաչափերին
մասնակցել է
111 մարդ

ընդհանուր առմամբ իրականացվել է
24 օր
դեմառդեմ
և
33
առցանց
հանդիպում

անգլերենից և ռուսերենից հայերեն է թարգմանվել շուրջ
500էջ
ռեսուրս

որպես դասընթացավար ներգրավվել է
8
փորձագետ
2 փորձագետ արտերկրից և 6 փորձագետ Հայաստանից:

պատրաստվել է
30
տեսանյութ,
որից 9-ը հայալեզու, 21-ը՝ հայերեն ենթագրերով,

Մեծահասակների ուսումնառության և կրթության դասընթացների իրականացում ՄԿ կենտրոնների միջոցով

2002-2007 թթ.-ին Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը իրականացնում էր մասնագիտական դասընթացներ՝ համագործակցելով տարբեր կառույցների՝ հիմնականում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (քոլեջների) հետ: Դասընթացներից շատերը ֆերմերների համար էին, սակայն ներառված էին նաև այնպիսի ուղղություններ, ինչպիսիք են տեքստիլ արդյունաբերությունը, ժողովրդական արհեստները, խոհարարություն, դիզայն, համակարգչային գրագիտություն և այլն:

2007 թ.-ից սկսած Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի աջակցության հիմքում է դրվել ինստիտուցիոնալ համագործակցությունը մեծահասակների կրթության կենտրոնների միջոցով՝ կայուն ֆինանսավորում ապահովելով մեծահասակ շահառուների համար դասընթացներ և այլևայլ նախաձեռնություններ իրականացնելու համար:

Նախորդ 15 տարվա ընթացքում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի աջակցությամբ գործել են 5 ՄԿ կենտրոններ, այդ թվում՝ ԽԱՉՄԵՐՈՒԿ կրթական խորհրդատվական հիմնադրամը (Ծիրակ), Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոն հիմնադրամը (Սյունիք), Իջևանի մեծահասակների կրթության կենտրոնը[11] և Դիլիջանի համայնքային կենտրոնը (Տավուշ), «Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ (Գեղարքունիք): Ներկայումս Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը աջակցում է 4 մեծահասակների կրթության կենտրոնների, ինչպես նաև համագործակցում է ևս 6 կառույցների հետ («Սևան» երիտասարդական ակումբ» ՀԿ, «Ծենացնենք մեր գյուղը» ՀԿ, «Ալվան ծաղիկ» սոցիալ-կրթական կենտրոն ՀԿ, «Կանաչ արահետ» ՀԿ, Գավառի պետական համալսարան, «Հայաստանի մանուկներ» հիմնադրամ), որոնք տրամադրում են ՄՈՒԿ ծառայություններ: 2020 թվականին այս 10 կազմակերպությունները հիմնել են Մեծահասակների կրթության ոչ ֆորմալ ցանց, որին աջակցում է Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ Հայաս-

11 | Իջևանի մեծահասակների կրթության կենտրոնը ստեղծվել է Եվրոպական միության ֆինանսական աջակցությամբ իրականացված «Աղքատության կրճատում մեծահասակների ակտիվ ուսուցման միջոցով. ծրագիր Տավուշի մարզում (ՊՐՈԱԿՏԻՎ)» (2009-2011) ծրագրի շրջանակում, այնուհետև Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի կողմից Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարության միջոցներով ևս 3 տարի աջակցություն է ստացել, որից հետո հանձնվել է համահիմնադիր կառույցների կառավարմանը:

տանը: Ցանցի նպատակն է փորձի փոխանակումը, ռեսուրսների մոբիլիզացիան, անդամների կարողությունների զարգացումը և այլ նախաձեռնությունների իրականացումը, որոնք կնպաստեն իրենց ծառայությունների բարձր որակին և համապատասխանությանը:

Աշխատաշուկայի պահանջներին համապատասխան մասնագիտական հմտություններ ձևավորող հարյուրավոր դասընթացներին զուգընթաց ՄԿ կենտրոններն իրականացրել են բազմաթիվ քննարկումներ, հանրային լսումներ, համայնքային նախաձեռնություններ՝ նպաստելով կենտրոնների շահառուների և համայնքի բնակիչների քաղաքացիական մասնակցությանը և համայնքի կյանքում ներգրավմանը:

Մեծահասակների կրթության գործընկեր կենտրոններ

Մեծահասակների կրթության գործընկեր կենտրոններ	Շահառուների միջին տարեկան թիվ	Դասընթացների հիմնական ուղղություն
ԽԱՉՄԵՐՈՒԿ կրթական խորհրդատվական կենտրոն հիմնադրամ **2007-2022**	**2700**	Համակարգչային հմտություններ Դիմահարդարում, վարսահարդարում, մատնահարդարում Փափուկ հմտություններ, այդ թվում՝ ֆինանսական և մեդիագրագիտություն Թխվածքների պատրաստում և ձևավորում, խոհարարություն, հացաթխություն Կարի ուսուցում Պապայե մաշե
Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոն հիմնադրամ **2013-2022**	**1200**	Օտար լեզուներ Կարի ուսուցում Համակարգչային գրագիտություն Հաշվապահություն Մեղվաբուծություն Վարսահարդարում Փափուկ հմտություններ, այդ թվում՝ մեդիագրագիտություն Տիկնիկագործություն Առողջ ապրելակերպ
«Դիլիջանի համայնքային կենտրոն» ՀԿ **2020-2022**	**550**	Բիզնես պլանավորում Համակարգչային գրագիտություն Մասնագիտական կողմնորոշում Օտար լեզուներ Արհեստներ Հաղորդակցություն և մարքեթինգ Տեսանկարահանում / լուսանկարահանում
«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ **2020-2022**	**400**	Համակարգչային հմտություններ Դաստիարակների և ուսուցչի օգնականների ուսուցում Մատնահարդարում Օտար լեզուներ Ծրագրավորման հիմունքներ Հաղորդակցման հմտություններ Ձեռնարկատիրություն Արհեստներ

Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոն[12]

12 | Սիսիանի Մեծահասակների կրթության կենտրոնը միակն է, որ ստեղծվել է Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի կողմից և իրականացնում է միայն մեծահասակ-ների կրթության ծրագրեր: Մյուս ՄԿ կենտրոնները տարբեր ոլորտներում փորձառու ՔՀԿ-ներ են, որոնց հետ համագործակցությամբ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը ներդրել է մեծահասակների կրթության բաղադրիչ:

2012թ. -ին Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը Հայաստանի հարավային շրջանների համայնքապետարանների համար մեծահասակների նոր կրթական կենտրոն հիմնելու մրցույթ հայտարարեց: Սիսիանի (Սյունիք) քաղաքապետարանի ներկայացրած ծրագիրը ճանաչվեց լավագույնը, և 2013թ.-ին Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի և Սիսիանի քաղաքապետարանի միջև ստորագրվեց հուշագիր Սիսիանի Մեծահասակների կրթության կենտրոնի հիմնման վերաբերյալ: Սա դարձավ հաջող համագործակցության առաջին քայլը, որը հաջորդ 10 տարիների ընթացքում վերաճեց կայուն գործընկերության: Սիսիանի քաղաքապետարանի տրամադրած մեծահասակների կրթության կենտրոնի տարածքը 2013 թ.-ին վերանորոգվեց և կահավորվեց Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի ֆինանսական աջակցությամբ: 2014թ.-ից ի վեր Կենտրոնը մատուցում է Սիսիան համայնքի բնակիչների անձնական և մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացմանը միտված կրթական ծառայություններ:

2014-2022 թվականներին Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոնն իրականացրել է ավելի քան 20 ուղղությամբ տարատեսակ դասընթացներ: Այդ դասընթացներին մասնակցել է ավելի քան 1200 շահառու: Ամենամեծ պահանջարկն են վայելում համակարգչային գրագիտության և անգլերենի դասընթացները: Դասընթացները մատչելի են համայնքի համար, քանի որ ֆինանսավորվում են Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի կողմից, մինչդեռ շահառուները վճարում են տարեկան 8000 ՀՀ դրամ անդամավճար Կենտրոնի կողմից առաջարկվող բոլոր դասընթացներին մասնակցելու համար: Այս քաղաքականությամբ նրանք ապահովում են ՄՈՒԿ ծրագրերի հասանելիությունը և ողջ տարվա ընթացքում կայուն մասնակցության հնարավորությունը համայնքի բնակչության համար:

Կենտրոնը համագործակցում է տարբեր տեղական գործընկերների հետ (զբաղվածության կենտրոն, գործընկերներ և գործատուներ), որոնք աշխատում են Սիսիանի աշխատաշուկայի պահանջարկի և մասնագիտական առաջարկի միջև համապատասխանության բարելավման ուղղությամբ: Կենտրոնն իրականացնում է նաև տեղական ժողովրդավարության, սոցիալական գործընկերության, բյուջեի արդյունավետ կառավարման, հանրային կառավարման և համայնքային զարգացման նախագծեր ԱՄՆ[13] դեսպանատան, ԵՄ[14] և այլ դոնորների ֆինանսական աջակցությամբ:

13 | Ամերիկայի միացյալ նահանգներ

14| Եվրոպական միություն

Համայնքային զարգացում և քաղաքացիական մասնակցություն

Հանրային միջոցառումները, այդ թվում տարբեր արշավներն ու փառատոնները, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի գործունեության կարևորագույն բաղադրիչներից են: Դրանք հնարավորություն են տալիս մեծահասակների կրթությունն ու ուսումնառությունը կիրառել որպես քաղաքացիական ներգրավման, գիտելիքի և փորձի միջսերնդային փոխանակման, գլոբալ զարգացումների մասին տեղեկացվածության գործիք՝ ընդգրկելով հասարակության ավելի լայն շերտերի:

Ստորև ներկայացված են մի քանի հիշարժան օրինակներ:

Մեծահասակների կրթության շաբաթներ

2003-2010 թթ.-ին յուրաքանչյուր տարի կազմակերպվել են «Մեծահասակների կրթության շաբաթ» միջոցառումները: Առաջին՝ 2003 թվականի միջոցառումների շարքը կոչվում էր «Մեծահասակների կրթության օրեր Հայաստանում», որը կազմակերպվել էր Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի և այս ոլորտով հետաքրքվող և մտահոգ մի շարք մասնագետների կողմից: Հետագա տարիների «Մեծահասակների կրթության շաբաթ» -ները կազմակերպվում էին «Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» ՀԿ հետ համատեղ՝ համագործակցելով տեղական և միջազգային բազմաթիվ կառույցների հետ (ՀՀ ԿԳՄՍՆ, ՀՀ Զբաղվածության պետական ծառայություն, Եվրոպական զարգացման հիմնադրամ, ԱՄՆ ՄԶԳ[15], ՄԱԿ-ի Մասնագիտական կրթության և ուսուցման աջակցության ծրագիր, Բրիտանական խորհուրդ, «Գլոբալ զարգացումներ» հիմնադրամ, մի շարք թանգարաններ և այլն): «Մեծահասակների կրթության շաբաթ»-ները յուրաքանչյուր տարի ունեցել են որոշակի ուղղվածություն՝ մեծահասակների ուսումնառության և կրթության քաղաքականության հարցերի քննարկումներից մինչև միջմշակութային երկխոսության խթանում, թանգարանները որպես ցկյանս ուսումնառության միջավայր զարգացնելուց մինչև մեծահասակների համար վարպետաց դասերի կազմակերպում: Միջոցառումների աշխարհագրությունը նույնպես մեծ էր՝ տարածվելով Հայաստանի բազմաթիվ քաղաքներում: Միջոցառումներին մասնակցել են հազարավոր քաղաքացիներ:

«Մեծահասակների կրթությունը ի նպաստ կայուն զարգացման նպատակների» արշավ (մարտ-նոյեմբեր, 2021 թ.)

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը, ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ համագործակցությամբ, 2021թ.-ին իրականացրել է «Մեծահասակների կրթությունը ի նպաստ Կայուն զարգացման նպատակների» արշավը:

Արշավի նպատակն էր բարձրացնել Հայաստանում կայուն զարգացման նպատակների մասին իրազեկվածության մակարդակը երիտասարդների և մեծահասակների շրջանում, ինչպես նաև վեր հանել Հայաստանում կայուն զարգացման նպատակների իրագործման այն խնդիրները, որոնց կարող է նպաստել մեծահասակների կրթությունը:

15 | ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալություն

Այդ նպատակների իրագործման համար 2021թ. հունիս – նոյեմբեր ամիսների ընթացքում իրականացվել են մի շարք միջոցառումներ և նախաձեռնություններ.

- ԿԶՆ ֆորումներ Երևանում, Կապանում և Սևանում,
- Հայաստանում ԿԶՆ առնչվող խնդիրների շուրջ հետազոտական նախագծերի իրականացում անհատ հետազոտողների կողմից,
- ԿԶՆ առնչվող համայնքային նախագծերի դրամաշնորհներ Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի մարզային ՄԿ կենտրոնների համար:

Առաջին ֆորումը տեղի է ունեցել հունիսի 30-ին Երևանում, որի նպատակն էր ԿԶՆ-ների, առկա հետազոտությունների և Հայաստանից ու աշխարհից լավագույն փորձի ներկայացումը: Ֆորումին ներկա էին անհատ հետազոտողներ, ոլորտի փորձագետներ, Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի մարզային ՄԿ կենտրոնների ներկայացուցիչներ: Առաջին ֆորումից հետո արշավին մասնակցելու հետաքրքրություն հայտնած հետազոտողները ԿԶՆ առնչվող որևէ թեմայով հետազոտություն անելու հայտ են ներկայացրել: Ներկայացված 29 հայտերից 11-ը ընտրվել են իրականացման համար, և հետազոտողները սկսել են իրենց աշխատանքը փորձագետների աջակցությամբ: Հետազոտությունների արդյունքները ներկայացվել են «ԿԶՆ Կանգ Առ Սևանում» ֆորումի ընթացքում, որն անց է կացվել նոյեմբերի 27-ին Սևան քաղաքում: Ֆորումին մասնակցում էին 8 երիտասարդական խմբեր ՀՀ տարբեր մարզերից՝ ներկայացնելով ՀԿ-ներ, համալսարաններ և գյուղական համայնքներ: Մասնակից երիտասարդները մեկ օրվա ընթացքում ուսումնասիրել են ՄԱԿ ԿԶՆ-ները տարբեր դիտանկյուններից, այդ թվում ծանոթացել ԿԶՆ հետազոտությունների արդյունքներին և մշակել ծրագրեր՝ ուղղված կայուն զարգացման նպատակների իրագործմանը:

Հետազոտություններին և ֆորումներին զուգահեռ 4 համայնքներում կազմակերպվել և իրականացվել են համայնքային նախաձեռնություններ, որոնք անդրադարձել են ԿԶՆ որևէ ասպեկտի Հայաստանում, ներառյալ.

- Ապահով, ներառական և մատչելի, կանաչ և հանրային տարածքների համընդհանուր հասանելիություն (ԿԶՆ 11,7)
- Զբաղվածություն, արժանապատիվ աշխատանք գտնելու և ձեռներեցությամբ զբաղվելու համար պատշաճ հմտություններ ունեցող երիտասարդների և մեծահասակների թվի ավելացում (ԿԶՆ 4,4)
- Զբաղվածություն չունեցող, կրթություն կամ ուսուցում չստացող երիտասարդների համամասնության կրճատում (ԿԶՆ 8,6) և այլն:

Համայնքային փառատոներ

2020 թ.-ից սկսած համայնքային փառատոներին օժանդակելը նույնպես Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի առաջնահերթություններից է: Դրանք հնարավորություն են տալիս պահպանել և հանրահռչակել մշակութային արժեքները, ինչպես նաև նպաստում են գիտելիքի և փորձի միջսերնդային փոխանակմանը: Տարաբնույթ ծրագրերի շրջանակներում համագործակցելով Մեծահասակների կրթության կենտրոնների, Մեծահասակների կրթության ոչ ֆորմալ ցանցի անդամների և գործընկեր այլ ՀԿ-ների հետ՝ արդեն իսկ նախաձեռնվել են մի շարք փառատոներ, որոնք ավանդույթ դառնալու հավակնություն ունեն:

Արիշտայի փառատոն

Վայր՝ Կոտայքի մարզ, գյուղ Բջնի
Իրականացնող՝ Ծենացնենք մեր գյուղը ՀԿ

Դդմի տոն

Վայր՝ Տավուշի մարզ, Հովք համայնք
Իրականացնող՝ Կանաչ արահետ ՀԿ

Չեչիլ պանրի փառատոն «Հաց ու պանիր, կեր ու բանիր»

Վայր՝ Շիրակի մարզ, քաղաք Գյումրի
Իրականացնող՝ «Խաչմերուկ» կրթական խորհրդատվական հիմնադրամ

Կարիերայի տոնավաճառ

Վայր՝ Սյունիքի մարզ, քաղաք Սիսիան
Իրականացնող՝ Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոն

Արփիի օրեր

Վայր՝ Շիրակի մարզ
Իրականացնող՝ «Խաչմերուկ» կրթական խորհրդատվական կենտրոն հիմնադրամ,

«Ալվան ծաղիկ» սոցիալ-կրթական կենտրոն

Ափդեյթ փառատոն

(«Սևան» միջազգային երաժշտական փառատոնի շրջանակում)
Վայր՝ Գեղարքունիքի մարզ
Իրականացնող՝««Սևան» երիտասարդական ակումբ» ՀԿ

ՑանցԱՌ ՍԱՐԴ առցանց փառատոն

2020թ. օգոստոսին, ՔՈՎԻԴ-19 համավարակով պայմանավորված, «ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի շրջանակներում դեմառդեմ միջոցառման փոխարեն գաղափարների գեներացման մեկ շաբաթ տևողությամբ առցանց փառատոն իրականացվեց: Այն ստացավ **«ՑանցԱՌ ՍԱՐԴ»** անվանումը՝ միտված «Առցանց Ստեղծարար, նորԱրար, գաղափարՐ, մարԴաշատ» նախագծերի մշակմանը: Մասնակիցները ծրագրի թիրախ մարզերի ՔՀԿ ներկայացուցիչներն էին (շուրջ 100 մարդ), որոնք հրավիրված էին խմբեր կազմելու և ծրագրի երեք թիրախ մարզերում (Ծիրակ, Կոտայք, Գեղարքունիք) միջոցառումների և փառատոնների նորարարական գաղափարներ մշակելու: Միջոցառման կազմակերպման համար տարբեր առցանց հարթակներ են կիրառվել (zoom, facebook, էլեկտրոնային նամակագրություն): Փառատոնը ներառում էր մի շարք սեսիաներ, այդ թվում գաղափարների գեներացման խմբային աշխատանք, գաղափարների ներկայացում, վեբինար, համերգ և ներկայացում, ինչպես նաև փակման արարողություն:

Միջոցառումների ութ նախագծեր մշակվեցին և ներկայացվեցին մասնագիտական ժյուրիին: Ներկայացված նախագծերից երեքը (յուրաքանչյուր մարզի համար մեկ նախագիծ) ընտրվեցին իրականացման համար:

Տարածաշրջանային, ոլորտային, լրացուցիչ ծրագրեր

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը պարբերաբար իրականացնում է նաև տարածաշրջանային կարևորության ծրագրեր, ինչպես նաև ստանում է լրացուցիչ ֆինանսավորում (Եվրոպական միություն, Գերմանիայի Արտաքին գործերի նախարարություն), որոնք հնարավորություն են տալիս ընդլայնել գործունեության շրջանակը: Նման ծրագրերի իրականացումը նպաստել է Հայաստանում հետևյալ բնագավառներում մեծահասակների կրթության ներառմանը և կարևորմանը.

- թանգարանային կրթություն,
- բանտային կրթություն,
- խոցելի մեծահասակների մեդիագրագիտություն,
- ուսուցիչների մասնագիտական կարողություններ,
- բանավոր պատմությունը որպես պատմական անցյալի հետ առերեսվելու մեթոդ,
- տեղահանված անձանց սոցիալական ինտեգրում և այլն:

Ստորև առանձնացված են այդ ծրագրերից մի քանիսը:

Թանգարանային կրթություն

2002թ.-ին իր հիմնադրումից ի վեր Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը աշխատել է նաև թանգարանային կրթության ոլորտում՝ հայաստանյան թանգարանները որպես մեծահասակների ուսումնառության և կրթության միջոց և միջավայր զարգացնելու համար: Թանգարանների հետ աշխատանքը ներառել է ինչպես թանգարաններում կրթական ծրագրերի ներդրում, թվային տեխնոլոգիաներով զինում, ցուցադրությունների արդիականացում, այնպես էլ թանգարանային աշխատակիցների վերապատրաստում և կարողությունների զարգացում (ավելի քան 700 աշխատակից):

2009 թ.-ին Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվել է A MUSE-ALL («Ձանձրույթից, փոշուց և քայքայումից անդին. թանգարանները որպես միջ-մշակութային երկխոսության, ցկյանս ուսումնառության տարածք») տարածաշրջանային ծրագիրը: Ծրագրի շրջանակներում իրականացվել են թանգարանների կարիքների գնահատում, տեխնիկական հագեցվածություն, աշխատակիցների վերապատրաստում, այդ թվում ուսումնական այց Գերմանիա, ինչպես նաև կրթական մի շարք միջոցառումներ:

Թանգարանների հետ աշխատանքի ինստիտուցիոնալացման և մեծահասակների կրթության ծրագրերն էլ ավելի թիրախավորելու նպատակով Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ Հայաստանը իր գործընկերներ Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիայի և Արամ Խաչատրյանի տուն-թանգարանի հետ համատեղ 2014թ. հիմնել է Թանգարանային

կրթության կենտրոնը: Հաջորդ հինգ տարիների ընթացքում Կենտրոնը հիմնականում զբաղվել է թանգարաններում մեծահասակների կրթության ծրագրեր իրականացնելու կարողությունների զարգացմամբ:

2018-2021 թթ. իրականացված «ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի շրջանակում աշխատանքը թանգարանների հետ շարունակվել է: Մասնավորապես, Մարիամ և Երանուհի Ասլամազյանների պատկերասրահում, Կիլիկիայի հայերի պատմության թանգարանում, Հայաստանի ազգային պատկերասրահի Մարտունու մասնաճյուղում, Միեր Մկրտչյանի թանգարանում և Օրբելի եղբայրների տուն -թանգարանում ստեղծվել են մուլտիմեդիա ցուցադրություններ, որոնք մեծացրել են թանգարանային ցուցանմուշների կրթական նշանակությունը:

Տարածաշրջանային ծրագրեր

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը ներկայացված է աշխարհի ավելի քան 30 երկրում, որոնց հետ աշխատանքը համակարգվում է ըստ տարածաշրջանային ենթախմբերի: Հայաստանյան գրասենյակը գործում է Կովկաս և Հարավարևելյան Եվրոպա տարածաշրջանային գրասենյակի համակարգման ներքո՝ Վրաստանի, Բոսնիա և Հերցեգովինայի, Կոսովոյի հետ համատեղ:

Տարածաշրջանային մակարդակում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը խրախուսում է գործընկեր երկրների միջև համագործակցությունն ու փորձի փոխանակումը համատեղ ծրագրերի, պարբերական հանդիպումների և այլ գործողությունների միջոցով: 20 տարվա ընթացքում իրականացվել

են մի շարք տարածաշրջանային ծրագրեր, որոնց թվում են «Հանուն մարդու իրավունքների. կրթությունը քրեակատարողական հիմնարկներում» (Բելառուս, Մոլդովա, Ուկրաինա, Հայաստան) և «Պատմության մրցույթներ Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում 3.0» ծրագրերը:

Պարբերաբար կազմակերպվում են նաև տարածաշրջանային ակադեմիաներ, որոնք ամեն անգամ ունենում են կոնկրետ թեմատիկ ուղղվածություն: Հայաստանը հյուրընկալել է 2 տարածաշրջանային ակադեմիա և մեկ միջազգային ճամբար.

- Գենդերային ակադեմիա, Աղվերան, սեպտեմբերի 16-22, 2013 թ.,
- Աշնանային ակադեմիա «Ակտիվ քաղաքացիություն. ինչպես կազմել և իրականացնել մեծահասակների համար նախատեսված դասընթացներ՝ քաղաքացիական մասնակցությունը մեծացնելու նպատակով», Դիլիջան, հոկտեմբերի 26-30, 2016 թ.,
- «Պատմության կամուրջներ» ցանցի տարեկան աշխատարան, «Բացակա/աքսորված մարդկանց մշակութային ժառանգությունը», Ծափաթաղ, մայիսի 26-27, 2017 թ.,

Պատմության ճամբար, «Բարեկամության և երջանկության ամրո՞ց. Բացահայտելով խորհրդային քարոզչությունը», Երևան, 25 – 28 հոկտեմբեր, 2022 թ.:

Հայ-թուրքական հաշտեցման ծրագրեր

2009-2016 թվականներին Դի-Վի-Վի Ինթերնեյշնալն ու գործընկերներն իրականացրել են հայ-թուրքական հաշտեցման մի քանի ծրագրեր, որոնք ֆինանսավորվել են Գերմանիայի արտաքին գործերի նախարարության կողմից: Այս ծրագրերի հիմնական նպատակն էր մեծահասակների կրթության, փոխայցելությունների, բանավոր պատմության, լրագրության և արվեստի միջոցով կողմերի համար հնարավորություններ ստեղծել միմյանց հետ խոսելու, միմյանց լսելու և անցյալի հետ առերեսվելու համար:

Առաջին ծրագիրը՝ **«Խոսելով միմյանց հետ. մեծահասակների կրթությունն ու բանավոր պատմությունը ի նպաստ հայ-թուրքական հաշտեցման»,** իրականացվել է երեք փուլով՝ 2009-2013թթ: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը իր գործընկերներ «Հազարաշեն» ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոնի (Հայաստան), Հայ դերասանների միության (Հայաստան) և «Անադոլու քուլթուր» կազմակերպության (Թուրքիա) հետ համատեղ նախաձեռնել և անց են կացրել մի շարք ուսանողական ճամբարներ, որտեղ մասնակիցները ձեռք են բերել բանավոր պատմության մեթոդաբանության հիման վրա հարցազրույցներ անցկացնելու, փոքրամասշտաբ ծրագրերի նախագծման և իրականացման կարողություններ, ինչպես նաև փերֆորմանսի, լուսանկարչության և գրավոր խոսքի միջոցով ինքնարտահայտման հմտություններ: Ծրագրի շրջիկ ցուցահանդեսը ցուցադրվել է Հայաստանում, Թուրքիայում, Վրաստանում, Կիպրոսում, Ֆրանսիայում և Գերմանիայում՝ ծրագիրը ներկայացնելով այդ երկրների հանրությանն ու այնտեղ բնակվող սփյուռքին:

«Գործելով միասին» ծրագիրը (2015 - 2016) Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի և նրա գործընկեր կազմակերպությունների՝ «Հազարաշեն» ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոնի (Հայաստան) և «Պատմության հիմնադրամի» (Թուրքիա) համատեղ նախաձեռնությունն էր: Ծրագիրը նախատեսում էր ուղևորություն Ստամբուլից Երևան՝ ցեղասպանության ճանապարհներով (պատմական Արևմտյան Հայաստանում) դեպի Հայաստան՝ այցելելով Գյումրի, Արագածոտնի մարզի որոշ գյուղեր, Էջմիածին և Երևան:

Դժբախտաբար թուրքական բանակի ու Քրդական բանվորական կուսակցության միջև զինված հակամարտության վերսկսումը, ինչպես նաև Իսլամական Պետություն խմբավորման ահաբեկչական գործողությունները անհնար դարձրեցին տարածաշրջանում անվտանգ ճանապարհորդելը և արդյունքում իրականացվեց ճամփորդության միայն հայաստանյան հատվածը:

Ծրագրի շրջանակներում ստեղծվեցին մի շարք գրքեր և այլ ռեսուրսներ (տես Հավելված 2):

Տարածաշրջանային և լրացուցիչ ծրագրերի ամբողջական ցանկը ներառված է Հավելված 1-ում:

4. Ավելի քան 60,000 շահառու

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի 20-ամյա գործունեության ընթացքում ավելի քան 60,000 շահառու ուղղակիորեն կամ անուղղակիորեն օգտվել է իրականացված աշխատանքներից, այդ թվում՝

Մեծահասակների կրթության կենտրոնների կողմից իրականացված դասընթացների ավելի քան

7,000
մասնակից

Վերաորակավորված և վերապատրաստված շուրջ

1,300
մասնագետ

Հանրային միջոցառումների, քննարկումների, սեմինարների, բազմաբնույթ կրթական ծրագրերի մասնակցած

51,700
շահառու

մեր շահառուները. հաջողության պատմություններ

Անժելա Նազարյանը մասնագիտությամբ մանկավարժ-կենսաբան է: Սովորել է Վանաձորի պետական համալսարանում, աշխատել «Հայփոստ»-ում: Սոցիալական հարթակներից իմանալով **Դիլիջանի համայնքային կենտրոնի** մասին՝ մասնակցել է ձեռնարվեստի մի շարք խմբակների՝ համատեղելով հոբբին և աշխատանքը:

Ստացած մասնագիտությունը համարելով չափազանց կարևոր, բայց ոչ շատ արդիական՝ փորձել է իր համար բացահայտել նոր մասնագիտություններ՝ մասնակցելով Կենտրոնի կողմից առաջարկվող մեկ այլ՝ «Մասնագիտական կողմնորոշում» դասընթացին: Ապրելով Դիլիջանում և հասկանալով սպասարկման ոլորտի պահանջարկի մեծացումը համայնքում՝ հաճախել է առաջարկվող դասընթացին և հմտացել այդ ոլորտում: Դասընթացի շրջանակում ձեռք է բերել փափուկ հմտություններ, բարելավել անգլերենի և ռուսերենի իմացությունը: Դասընթացը հնարավորություն է տվել ինքնադրսևորվելու, փորձելու և հաղթահարելու նոր մարտահրավերներ:

Դասընթացն ավարտելուց անմիջապես հետո Անժելան աշխատանքի է անցել սպասարկման ոլորտում, կիրառել ստացած գիտելիքներն ու ժամանակի ընթացքում ունեցել պաշտոնի և, համապատասխանաբար, աշխատավարձի բարձրացում: Վստահ է, որ ձեռք բերված գիտելիքները դեռ երկար կծառայեն իրեն ամենատարբեր ոլորտներում: Այժմ մշտապես քաջալերում է իր ընկերներին և հարազատներին մասնակցել Կենտրոնի կողմից առաջարկվող նոր դասընթացներին:

Արփինե Փահլևանյանը սովորել է Գյումրու պետական բժշկական քոլեջի բժշկական գործ բաժնում, սակայն ուսման ընթացքում արդեն հասկացել է, որ այդ մասնագիտությունը իրենը չէ և երբեք չի աշխատելու այդ ոլորտում: Ավարտելուց հետո ամուսնացել է, 2 երեխա ունեցել, զբաղվել է տնային տնտեսությամբ ու երեխաների դաստիարակությամբ, սակայն այդ բոլոր տարիների ընթացքում մտածել է նոր մասնագիտություն ձեռք բերելու մասին:

«Խաչմերուկ» կրթական խորհրդատվական կենտրոն հիմնադրամի դասընթացների մասին իմացել է ընկերուհուց, ով մասնակցել է կենտրոնի մատնահարդարման դասընթացին: Վերջինս հետագայում տեղափոխվել է Մոսկվա, այնտեղ զգալի մասնագիտական հաջողությունների հասել և իր ձեռքբերումները վկայակոչելով՝ հորդորել է Արփինեին անպայման այցելել կենտրոն և ընտրել կենտրոնի մասնագիտական ուսուցումներից մեկը:

Արփինեն եկել է կենտրոն, ծանոթացել ընթացող մասնագիտական ուսուցումներին, մասնակցել փորձնական դասերի և մատնահարդարման առաջին իսկ դասից հասկացել է, որ դա է իրենը, ուզում է սովորել և այս գործով զբաղվել: Այնուամենայնիվ, որոշել է իրեն մի փոքր էլ ժամանակ տալ համոզվելու, որ ճիշտ ուղղի վրա է և պատրաստ է փոփոխություններին: Որոշման մեջ ամրապնդվելուն զուգահեռ՝ հետաքրքրվել է մասնագիտական անհրաժեշտ գործիքներով, քիչ-քիչ դրանք ձեռք է բերել և դասընթացը սկսել է վստահ համոզմամբ, որ ավարտելուց անմիջապես հետո անցնելու է աշխատանքի:

«Առաջին մասնագիտական քայլերն արել եմ տանը: Սկզբում հաճախորդներս ծանոթ-բարեկամներ էին, հետո ընդլայնվեց, սկսեցին անծանոթներ գալ. աշխատեց Գյումրիում ամենաարդյունավետ բերանից-բերան գովազդը: Գործերս լավ են ընթանում, փոքրիկ խանութ եմ բացել մասնագիտական նյութերի և սարքավորումների վաճառքի համար: Կենտրոնում սովորածը գնահատելով՝ գնորդներին անհրաժեշտ խորհրդատվություն եմ տալիս՝ փորձելով վերադարձնել ստացածիս փոքր մասը: Պլաններս մեծ են. տան բակում փոքրիկ կառույց ունենք, որտեղ վերանորոգման աշխատանքներ ենք կատարում, որպեսզի կարողանամ իմ սեփական գեղեցկության սրահը ստեղծել: Իմ աշխատանքն ինձ ավելի ինքնուրույն և ինքնավստահ դարձրեց կյանքում. ես ամեն օր լավ եմ զգում այն փաստից, որ կարողանում եմ աշխատել և ինչ-որ բանով օգնել իմ ընտանիքին» -ասում է Արփինեն:

5. Ծուրջ 50 ռեսուրս

20 տարիների ընթացքում Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակը մշտապես կարևորել է փաստահենք քաղաքականությունը և որակյալ ռեսուրսների վրա հիմնված կարողությունների զարգացումը: Այդ պատճառով մշտապես նախաձեռնել է մեծահասակների ուսումնառության և կրթության ոլորտի հետազոտություններ, աջակցել ուղեցույցերի, ձեռնարկների մշակմանը և հանրայնացմանը՝ թե առցանց, թե տպագիր եղանակներով, թարգմանել է ոլորտի վերաբերյալ արդիական հոդվածներ, գրքեր և այլ[16]: Ստեղծված ռեսուրսների հիմնական խմբերն են՝

- **Հետազոտություններ**
- **Գրքեր, հոդվածներ, ձեռնարկներ և այլն**
- **Տեսանյութեր**
- **Մուլտիմեդիա**

16 | Ամբողջական ցանկը զետեղված է Հավելված 2-ում:








ՉԼԱՎՈՂ ՁԱՅՆԵՐ


vhs
DVV International
STUDY
on Adult Learning and Education in Armenia
Never stop learning
Lifelong Learning is the key to success
It is never too late to learn
DIE


vhs
DVV International
ՅԱՆՑԵՐԻ
ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
ՄԵԾԱՀԱՍՍԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ
ԵՐԵՎԱՆ
2020

vhs
DVV International
ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ
ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ
ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ
2020-2021
DIE
CRRC
Armenia

Շարունակական կրթությունը
թանգարաններում

Ավագ Գրիգորյան
Ասուրիկ Մաքարյան
ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ
ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ


vhs
DVV International
ADULT EDUCATION IN ARMENIA
STUDY OF POLICIES AND PRACTICES
Review of the State of Affairs and Developing Recommendations for Integration in Policy Framework and Practice
Team of national experts
Serob Khachatryan
Edith Sughomonyan
Aveik Mejlumyan
International expert
Heribert Hinzen
The study is conducted by DVV International Armenia Country Office and funded by the German Federal Ministry of Economic Cooperation and Development (BMZ)
Yerevan 2020


vhs
DVV International
ՄԵԴԻԱԽԱՉԲԱՌ

ԳՈՐԾԱՐՔ 1 9 3 7
Ստալինյան բռնանշումներ
Հայաստանում
դատմություն, հիշողություն, առօրյա
Հրանուշ Խուդոյան
Գոհարիկ Ղազարյան
Հարությունի Մուրադյան
Լևոն Աբրահամյան


«Հապար ու մի երգ»
Հայկական ժողովրդական երգերի մատենաշար
Հատոր Ա
ՔՆԱՐԱԿԱՆ ԵՐԳԵՐ
LYRICAL SONGS
"One Thousand and One Songs"
Series of Armenian folk songs
Volume 1

vhs
DVV International
BMZ
ԿԱՆԽԱՐԳԵԼՈՂ
ԿՈՆՍԵՐՎԱՑԻԱՆ
ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ

Խոսակով
միմյանց հետ


Armenian
Voices
of Istanbul


vhs
DVV International
50 years
DVV International


Speaking to
One Another
TOOLBOX for working on reconciliation in adult education

Աննա Մուրադյան
ՊԱՏ հայ-թուրքական սահմանում

vhs
DVV International
BMZ
Վարուժան Ավանեսյան
Ռուզաննա Մելյան
ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ
ՈՒՍՈՒՑՄԱՆ ԵՎ
ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ
ԽԱՂԵՐ



6. Իրագործողներ

20-ամյա գործունեության նման հետագիծն անհնար կլիներ առանց այն մարդկանց ու կառույցների, որոնք այս տարիների ընթացքում իրենց պրոֆեսիոնալիզմով, նվիրվածությամբ և գործընկերությամբ եղել են Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյան գրասենյակի կողքին: Մեր ծրագրերն ու դասընթացները, միջոցառումներն ու հետազոտությունները իրագործողներն են՝

մեր աշխատակազմը

20 տարում

շուրջ

20 աշխատակից

մեր փորձագետները

շուրջ

100 մասնագետ

մեր գործընկերները

ավելի քան

150 կառույց

Հավելվածներ 3 և 4 -ում անուն առ անուն նշում ենք բոլոր նրանց, ում հետ ձեռք ձեռքի անցել ենք 20-ամյա ճանապարհի՝ ի նպաստ Հայաստանում մեծահասակների ուսումնառության ու կրթության զարգացմանը:

Active poll
42
How was your day? :)
Informative 10
Interesting 9
Great 4
ძალიან საინტერესო და ნაყოფიერი
great
Super!
Interesting and productive, thanks a lot
It was very informative. thank you very much
we are
ale
International Conference
ADULT LEARNING AND EDUCATION in the South Caucasus: the milestones
Tbilisi, Georgia
2022
vhs

7. Հավելվածներ

Հավելված 1: 20 տարիների ընթացքում իրականացված լրացուցիչ ծրագրեր

Ծրագիր	Իրականացման տարեթիվ	Շահառուների թիվ	Դոնոր, գումար
Մեծահասակների հզորացում մեդիագրագիտությամբ 2.0	2022	**250**	AA 89,935 Euro
PEACE: Տեղահանված և տեղական բնակչության համագործակցային ներգրավում հանրային և համայնքային կյանքին Հայաստանում և Վրաստանում	2022	**90**	GIZ 50,002 Euro
Մեծահասակների հզորացում մեդիագրագիտությամբ	2021	**508**	AA 79,929 Euro
Պատմության մրցույթներ Հայաստանում, Բելառուսում, Վրաստանում, Մոլդովայում և Ուկրաինայում 3.0	2021-2022	**282**	AA 55,990 Euro
Հանուն մարդու իրավունքների. կրթությունը քրեակատարողական հիմնարկներում (2.0)	2020	**201**	AA 29,220 Euro
Հանուն մարդու իրավունքների. կրթությունը քրեակատարողական հիմնարկներում (1.0)	2018	**270**	AA 21,910 Euro
ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ	2018-2021	**1436**	EU 547,026 Euro

Քաղաքացի նախագիծ. Ժամանակակից քաղաքացիական կրթության մոտեցումների խթանումը Հայաստանում՝ միջին և ավագ դպրոցներում	2016	**390**	AA 82,900 Euro
Արմենիա տոտալիտարիս. հասկանալով ստալինիզմն ու դրա հետևանքները Հայասանում	2012-2017	**12**	BMZ 160,250 Euro
Հայ-թուրքական հաշտեցման ծրագրեր 1. «Խոսելով միմյանց հետ» 2. «Գործելով միասին»	2009-2016		AA 461,850 Euro
Մեծահասակների կրթությունը ի նպաստ Սիրիայից տեղահանված անձանց ինտեգրմանը Հայաստանում	2014-2015	**500**	BMZ 35,400 Euro
A MUSE-ALL Ձանձրույթից, փոշուց և քայքայումից անդին. թանգարանները որպես միջմշակութային երկխոսության ցկյանս ուսումնառության տարածք	2009-2011	**100**	EU 235,250 Euro
Աղքատության կրճատում մեծահասակների ակտիվ ուսուցման միջոցով - ծրագիր Տավուշի մարզում (ՊՐՈԱԿՏԻՎ)	2009-2011	**602**	EU 266,000 EUR

Հավելված 2: Ռեսուրսներ[17]

17 | Հրատարակությունների մի մասը հասանելի է նաև առցանց:

Հետազոտություններ

«Հայաստանում խոցելի բնակչության շրջանում մեդիագրագիտության կարիքների գնահատում» հետազոտություն, 2021

ՀՀ Լրացուցիչ և շարունակական կրթության ռազմավարության և գործողությունների պլանի (2013-2017) իրականացման փորձագիտական գնահատում և հետագա գործողությունների ծրագրի մշակում, 2021

«Մեծահասակների կրթությունը Հայաստանում» հետազոտություն, 2020-2021

«Մեծահասակների ուսումնառությունը և կրթությունը Հայաստանում» ուսումնասիրություն, 2021

«Մեծահասակների կրթությունը որպես հետճգնաժամային մոտեցում և գործիք» ուղեցույց մեծահասակների ոչ ֆորմալ կրթական ծրագրեր իրականացնող կազմակերպությունների համար, 2021

«ՀՀ ազատազրկման վայրերում պատիժ կրող անձանց կրթության առկա իրավիճակը» հետազոտություն, 2020

Մեծահասակների կրթության քաղաքականության և պրակտիկայի ուսումնասիրություն, 2020

·Ցանցի արդյունավետության վերլուծությունը մեծահասակների կրթության կենտրոնների համատեքստում, 2020

«Աշխատաշուկայի հնարավորությունների քարտեզագրում» հետազոտություն, 2019

«Ազատազրկվածների կրթության (այդ թվում՝ մասնագիտական) ապահովման խնդիրները ՀՀ քրեակատարողական համակարգում» հետազոտություն, 2018

Գրքեր, հոդվածներ, ձեռնարկներ և այլն

Ուսումնառություն, ստեղծարարություն, նորարարություն՝ ի նպաստ համայնքահենք մշակույթի և զբոսաշրջության («ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագիր), 2021

«Ծնողավարման հմտություններ» դասընթացի ձեռնարկ, 2021

«Մեդիագիտակ» խաղ, 2021

ՄԱՆԻՖԵՍՏ. Մեծահասակների ուսումնառությունը 21-րդ դարում (հայերեն թարգմանություն)

Երիտասարդների և մեծահասակների կրթությունը 2030 օրակարգում, 2019 (հայերեն թարգմանություն)

Թանգարանային մանկավարժություն, 2019

Մեծահասակների կրթություն և զարգացում. հոդվածների ընտրանի, 2019 (հայերեն թարգմանություն)

«Հազար ու մի երգեր» քնարական երգերի ժողովածու /2 հատոր, 2018, 2019

«ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի դասընթացների ուղեցույց, 2018

Ռեսուրսահենք համայնքային զարգացման մեթոդաբանություն. գործնական ձեռնարկ, 2018

Պատ հայ-թուրքական սահմանին, 2018

Մեծահասակների կրթությունը և ուսումնառությունը Հայաստանում. ուսումնական նյութերի ժողովածու, 2018

Մեծահասակների ուսուցման և ուսումնառության խաղեր, 2018

«Չլսվող ձայներ. հիշողությունն ու հետհիշողությունը բանավոր պատմություններում» հոդվածների ժողովածու, 2018

Ճամփորդական հանդես «Գործելով միասին», 2017

Խոսելով միմյանց հետ. մեծահասակների կրթության միջոցով հաշտեցման ծրագրերի գործիքակազմ, 2016

Կրթությունը թանգարանում, 2016

Լրացուցիչ և շարունակական կրթություն, 2015

Ստալինյան բռնաճնշումները Հայաստանում. պատմություն, հիշողություն, առօրյա, 2015

«Ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» մոդուլը Հայաստանում, 2014

Մուշ, քաղցր Մուշ. քարտեզագրելով հուշեր Հայաստանից և Թուրքիայից, 2013

Կանխարգելող կոնսերվացիան թանգարանում, 2012

«Վերապատրաստողների վերապատրաստում» մոդուլ, 2011

«Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում» ասոցիացիայի ամսագիր, 2009-2011

Ստամբուլի հայկական ձայները, 2011

Հաշտեցման հեռանկարներ. տեսություն և պրակտիկա, 2010

Խոսելով միմյանց հետ. անձնական հիշողություններ անցյալից Հայաստանում և Թուրքիայում, 2010

Շարունակական կրթությունը թանգարանում, 2007 (հայերեն թարգմանություն)

18 | Բոլոր ծրագրային ֆիլմերը հասանելի են Դի-Վի-Վի Ինթերնյեշնալի յութուբյան ալիքում հետևյալ հղումով

Տեսանյութեր[18]
Ծրագրային ֆիլմեր

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալը Հայաստանում. 20 տարի միասին, 2022 (անիմացիոն ֆիլմ)

«Մեծահասակների կրթությունը Հայաստանում» հետազոտության ամփոփում, 2021 (անիմացիոն ֆիլմ)

«ԿԶՆ ԿԱՆԳ ԱՌ ՍԵՎԱՆՈՒՄ» երիտասարդական ֆորում, 2021

Թանգարանը՝ մուլտիմեդիա ճամփորդություն, 2021

Կոտայք. համեր, գույներ, արկածներ, 2021

Հայտնի և անհայտ արահետներով, 2021

#ՍԱՐԴ - Գաղափարների առցանց փառատոն, 2021

Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ Հայաստան. 15-ամյակ, 2017

«Ճանապարհի սկզբին» փաստագրական ֆիլմ, 2010

19 | Տեսանյութերը հասանելի են Բուն TV կայքում՝

«Կրթություն ամենուր և բոլորին» խորագրով տեսանյութերի շարք «Բուն TV»-ի հետ համատեղ, 2015 - 2016[19]

TED-ը՝ որպես մեծահասակների կրթության հարթակ. Քրիստինե Սարգսյան

Ազատ մարմին, անկախ երկիր. Կարեն Հակոբյան

Թանգարան – քաղաքացի. Մարինե Հարոյան

Թատրոնը՝ որպես ժամանակակից կրթամիջոց. Ծողակաթ Մլքե-Գալստյան

Ժողովրդական բարձրագույն դպրոցներ. Լուսինե Խառատյան

Կրթության դերը քաղաքացու ձևավորման գործում. Կարինե Գյադուկյան

Կրթությունը թանգարանում. Ալվարդ Գրիգորյան

Հայաստանում մեծահասակների կրթության վրա ազդող գործոնները. Էսթեր Հակոբյան

Մասնակցային կառավարում. Կարեն Հովհաննիսյան

Մեծահասակների կրթության իրականացման ձևերը. Տաթև Մարգարյան

Մեծահասակների կրթության ձևավորման քաղաքական և տնտեսական հիմքերը. Նվարդ Մանասյան

Մեծահասակների կրթության տեսական հիմքերը. Սերոբ Խաչատրյան

Մեծահասակների կրթություն և ցկյանս ուսումնառություն. Էդիթ Սողոմոնյան

Մեծահասակների կրթությունը խորհրդային և անկախ Հայաստանում. Գայանե Ղուկասյան

Մեծահասակների ոչ ֆորմալ կրթության ներուժը. Արեգ Թադևոսյան

Մենթորություն. Հասմիկ Սահակյան

Նախագծային ուսուցում. Ալեքսանդր Ծագաֆյան

Ո՞վ է համարվում մեծահասակ. Վարուժան Ավանեսյան

Ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության նախնական արդյունքների ճանաչում. Արամ Ավագյան

Մուլտիմեդիա ցուցադրություններ 5 թանգարանում

Մշակված «ԵՄ հանուն մշակույթի. առավել ուժեղ համայնքներ և տեղական նախաձեռնություններ» ծրագրի շրջանակում

Կիլիկիայի հայերի պատմության թանգարան

Հայաստանի ազգային պատկերասրահի Մարտունու մասնաճյուղ

Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ

Միեր Մկրտչյանի թանգարան

Օրբելի եղբայրների տուն-թանգարան

Հավելված 3: Դի-Վի-Վի Ինթերնեյշնալ Հայաստանի աշխատակիցները 2002-2022 թթ.

Ներկա աշխատակազմը՝ ըստ պաշտոնների	
Էսթեր Հակոբյան	Հայաստանյան գրասենյակի տնօրեն
Արմինե Դադայան	Փոխտնօրեն, ֆինանսական մենեջեր
Միշա Թադևոսյան	Ծրագրերի համակարգող
Տաթևիկ Ասրյան	Ծրագրերի համակարգող
Արևիկ Հարությունյան	Ծրագրերի համակարգող
Ալլա Գևորգյան	Ծրագրերի / ադմինիստրատիվ օգնական
Լիանա Ստեփանյան	Հաշվապահ
Դիանա Հակոբյան	Հաշվապահ
Սերոբ Բադալյան	Վարորդ

Մարդիկ, ովքեր մաս են կազմել Դի-Վի-Վի Ինթերնեյշնալի հայաստանյանի գրասենյակի 20-ամյա պատմության

1 | Անահիտ Մինասյան

2 | Աննա Մալխասյան

3 | Աննա Պողոսյան

4 | Աննա Զարգարյան

5 | Աշոտ Բարսեղյան

6 | Ավետիս Քեշիշյան

7 | Հասմիկ Գինովյան

8 | Հրաչյա Ռուբինյան

9 | Լուսինե Խառատյան

10 | Նազարեթ Նազարեթյան

11 | Վարուժան Ավանեսյան

Հավելված 4: Գործընկեր կառույցներ

Միջազգային կառույցներ. դոնորներ և գործընկերներ

Գերմանիայի Տնտեսական համագործակցության և զարգացման նախարարություն
Գերմանիայի դաշնության արտաքին գործերի նախարարություն
Գերմանիայի Դաշնային Հանրապետության Դեսպանություն Հայաստանում
Եվրոպական միություն
Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերություն (ԳՄՀԸ/ GIZ)
Եվրոպայի մեծահասակների կրթության ասոցիացիա (EAEA)
ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ցկյանս ուսումնառության ինստիտուտ (UIL)
Մեծահասակների կրթության գերմանական ինստիտուտ (DIE)
Արևելյան գործընկերության և Կենտրոնական Ասիայի երկրների բանտային կրթության միջազգային ցանց

Պետական հաստատություններ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
Ուսուցման Ազգային Հիմնադրամ
«Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամ (ԿԶՆԱԿ)
ՀՀ արդարադատության նախարարություն
Իրավական կրթության և վերականգնողական ծրագրերի իրականացման կենտրոն ՊՈԱԿ
Զբաղվածության պետական ծառայության գործակալություն
Կոտայքի մարզպետարան
Շիրակի մարզպետարան
Գեղարքունիքի մարզպետարան
Սիսիանի քաղաքապետարան

Մեծահասակների կրթության կենտրոնների ոչ ֆորմալ ցանցի անդամներ

Մեծահասակների կրթության կենտրոններ	Ցանցի անդամներ
«Դիլիջանի համայնքային կենտրոն» ՀԿ	«Ալվան ծաղիկ» սոցիալ-կրթական կենտրոն ՀԿ
ԽԱՉՄԵՐՈՒԿ կրթական խորհրդատվական հիմնադրամ	Գավառի պետական համալսարան
«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ» ՀԿ	«Կանաչ արահետ» ՀԿ
Սիսիանի մեծահասակների կրթության կենտրոն հիմնադրամ	«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ
	«Ծենացնենք մեր գյուղը» ՀԿ
	««Սևան» երիտասարդական ակումբ» ՀԿ

Ծրագրային գործընկերներ

Ազգային զարգացման գիտակրթական կենտրոն
Թանգարանային կրթության կենտրոն
Թանգարանների աշխատողների և բարեկամների ասոցիացիա ՀԿ
Ժողովրդավարական կրթության հայկական կենտրոն-ՍԻՎԻՏԱՍ ՀԿ
Հազարաշեն ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն ՀԿ
Հալեպ հայրենակցական բարեսիրական կազմակերպություն
Հայ դերասանների միություն
Հանրային լրագրության ակումբ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Մեդիա նախաձեռնությունների կենտրոն
Մեծահասակների կրթություն և ուսումնառություն ողջ կյանքի ընթացքում ՀԿ
ՄԻՀՐ սոցիալ-մշակութային կազմակերպություն
Սոցիալական արդարություն ՀԿ

Տավուշի մարզի առևտրաարդյունաբերական պալատ

Ցկյանս ուսումնառության հայաստանյան լիգա

Քյորբեր հիմնադրամ (ՅՈՒՍԹՈՐԻ ցանց)

Թանգարաններ

Ակսել Բակունցի տուն-թանգարան

Ավետիք Իսահակյանի հուշատուն-թանգարան (Երևան)

Ավետիք Իսահակյանի տուն-թանգարան (Գյումրի)

Արամ Խաչատրյանի տուն-թանգարան

Գաֆէսճեան արվեստի կենտրոն

Գեղարքունիքի երկրագիտական թանգարան

Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան

Եղիշե Չարենցի անվան գրականության և արվեստի թանգարան

Կիլիկիայի հայերի պատմության թանգարան

Կոմիտասի թանգարան-ինստիտուտ

Հայաստանի ազգային գրադարանի Գրատպության թանգարան

Հայաստանի ազգային պատկերասրահ

Հայաստանի ազգային պատկերասրահի Մարտունու մասնաճյուղ

Հովհաննես Թումանյանի տուն-թանգարան

Հովհաննես Ծիրազի տուն-թանգարան

Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ

Մարտիրոս Սարյանի տուն-թանգարան

Միեր Մկրտչյանի թանգարան

Պրոֆեսոր Հ. Կարապետյանի անվան Երկրաբանական թանգարան

Ռուսական արվեստի թանգարան

Սերգեյ Մերկուրովի տուն-թանգարան

Սերգեյ Փարաջանովի թանգարան

Ստեփան Զորյանի տուն-թանգարան

Ստեփան Ծահումյանի տուն-թանգարան

Վանաձորի քաղաքային համայնքի կերպարվեստի թանգարան

Օրբելի եղբայրների տուն -թանգարան

Կրթական հաստատություններ

Համագործակցություն 6 համալսարանի հետ.

Գավառի պետական համալսարան

Երևանի պետական համալսարան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարան

Հայաստանի ազգային ագրարային համալսարան

Հայաստանի ամերիկյան համալսարան

Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան

Ինչպես նաև 11 միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների (քոլեջների) և 70 հանրակրթական դպրոցների հետ:

Դրամաշնորհառուներ[20]

20 | Այս ցանկում նշված ՔՀԿ-ները ենթադրամաշնորհ են ստացել Եվրոպական միության և Գերմանիայի Արտաքին գործերի նախարարության ֆինանսական աջակցությամբ իրականացված ծրագրերի շրջանակում:

Ամասիայի քաղաքացիական հասարակության զարգացման կենտրոն ՀԿ

«Առավոտ» բարեգործական ՀԿ

Արդյունավետ կառավարում և համայնքային զարգացում ՀԿ

«Բլեջան» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ

«Գեղարեգ» կրթամշակութային ՀԿ

Գյումրի Թրավել Քլաբ ՀԿ

«Երիտասարդ ժուռնալիստների ասոցիացիա» ՀԿ

Իրավունքի ուժ ՀԿ

«Լիկիու երկիր» ՀԿ

«Կանաչ Տերև» ՀԿ

Երեխաների աջակցության հիմնադրամ

Հայ միասնության Խաչ ԲՄՀԿ

Հյուման Դիգնիթի ընդ Փիս ՀԿ

«Մեղվիկ» մանկապատանեկան ՀԿ

Միասին հանուն տնտեսական զարգացման ՀԿ

«Շենացնենք մեր գյուղը» ՀԿ

Չարենցավանի երիտասարդական ուսանողական ՀԿ

Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն ՀԿ

Տուրիզմի հետազոտական և զարգացման կենտրոն ՀԿ

Քաղաքային ուսումնասիրությունների կենտրոն ՀԿ

Այլ գործընկերներ

Հայ առաքելական եկեղեցու Շիրակի թեմ

Կրթական քաղաքացիական նախաձեռնություն

«Աստղիկ» Հաշմանդամ երեխաների Ծնողների Ասոցացիա ՀԿ

«Դայսն» ՍՊԸ

«Ընտանիք Լուսո» սոցիալական ՀԿ

«Ռելիսոֆտ» ՍՊԸ

Գյոթե կենտրոն

Միջազգային համագործակցության գերմանական խնայբանկերի հիմնադրամ (Sparkassenstiftung)

Իջևանի մեծահասակների կրթության կենտրոն

Խորան Արդ ինտելեկտուալ կենտրոն

Կանայք պատերազմում ՀԿ

Հալեպ հայրենակցական բարեսիրական կազմակերպություն

Հավատ ՀԿ

Հոդված 3 ակումբ

Հաշվապահության Ուսուցման Միջազգային Կենտրոն

Քեսապի հայրենակցական միությունը

ԱՄ ՓԱՐԹՆԵՐԶ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ ՔԱՄՓՆԻ ՍՊԸ

«ՎԻՍՏԱԱ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ
Արեն Մեհրաբյան բարեգործական հիմնադրամ
Երեմյան ակադեմիա
Կանա զարգացման կենտրոն
ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամ
Կրթական հետազոտությունների և խորհրդատվությունների կենտրոն
Գեղագիտության ազգային կենտրոն
«Բի Էս Սի» Բիզնեսի աջակցման կենտրոն